

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի  
հաշմանդամություն ունեցող անձանց  
հարցերով զբաղվող մարզային  
հանձնաժողովի նիստի  
20.05.2014թ.

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Տեղի ունեցավ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստ՝ հանձնաժողովի նախագահ ՀՀ Արագածոտնի մարզպետ Ս. Սահակյանի ղեկավարությամբ:

### Օրակարգ

#### **1. Հաշմանդամություն ունեցող երեխաներին կրթության մեջ ընդգրկելու հիմնախնդիրների մասին**

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Գ. Դանիելյան

Մասնակիցում էին հանձնաժողովի անդամներ՝

Գ. Դանիելյան—մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար

Ս. Պետրոսյան— մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Ս. Թադևոսյան-- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Ա. Դավայան----- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Ս. Զորյան--- մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Վ. Գևորգյան--- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ:

Ա. Մովսիսյան-- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ

Ժ. Ավետիսյան-- „Արայի“ հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ

Ա. Հովհաննիսյան- „Ծիծեռնակ” հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ

Հրավիրվածներ՝

Ս. Այվազյան-ԿՈՒԱՄ հասարակական կազմակերպության նախագահ

Գ.Աղաբաբյան---Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց

Ա. Աբգարյան---<<Թալին հույս>> ՀԿ-ի նախագահ

Օրակարգի հարցի կապակցությամբ հանդես եկավ տիկին Գ. Դանիելյանը: ՀՀ Արագածոտնի մարզում ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը համագործակցելով խնամակալության և հոգաբարձության մարմինների, հանրակրթական դպրոցների տնօրենների, միջազգային, տեղական հասարակական կազմակերպությունների հետ ուսումնասիրել և անհրաժեշտության դեպքում աջակցել է հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքներին՝ երեխաներին կրթական համակարգում ընդգրկելու, անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու հարցում: Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է պարտադիր ուսուցումից դուրս մնացած հաշմանդամություն ունեցող 15 երեխա: Դժվարություններ են առաջանում հեռավոր գյուղերում բնակվող հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքների համար՝ երեխաներին մարզի միակ հատուկ տիպի Աշտարակի թիվ 1 դպրոց ընդգրկելու հարցում: Մյուս հանրակրթական դպրոցները չունեն համապատասխան մասնագետներ՝ լոգոպետ, հոգեբան, սոցիալական աշխատող և շենքային համապատասխան պայմաններ /թեքահարթակաների, հարմարեցված սանհանգույցների բացակայություն/: Նշվեց, որ երեխաների պարտադիր ուսուցումից դուրս մնալու հիմնական պատճառը նրանց առողջական խնդիրներն են, ֆիզիկապես դպրոց հաճախելու անկարողությունը, ինչպես նաև ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը: Երեխաների մեծ մասն ունի երկարատև, հետևողական բուժման կարիք: Կրթությունից դուրս մնացած որոշ երեխաներ կարող են կրթությունը շարունակել հանրակրթական դպրոցներում , սակայն նրանց համար

անհրաժեշտ է կազմել անհատական ուսուցման ծրագրեր, կազմակերպել տնային ուսուցում:

Ելույթներով , առաջարկություններով հանդես եկան Գ.Աղաբաբյանը, Ս.Թադևոսյանը, Ա.Աբգարյանը,Ժ.Ավետիսյանը:

Քննարկումն ամփոփեց մարզպետ Ս.Սահակյանը:

Քննարկվող հարցի վերաբերյալ ընդունվեց **որոշում՝**

1. **Հանձնարարել** Ս. Թադևոսյանին՝ հաշմանադամ երեխաներին աջակցելու նպատակով և նրանց առողջական վիճակի վերաբերյալ լիարժեք պատկերացում ստանալու համար միամսյա ժամկետում ներկայացնել այդ երեխաների առողջական վիճակի մասին մանրամասն տեղեկատվություն:

2. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Ս.Պետրոսյանին՝ անհրաժեշտության դեպքում հաշմանդամություն ունեցող երեխաների համար կազմակերպել անհատական ծրագրով ուսուցում կամ տնային ուսուցում:

3.**Հանձնարարել** մարզի համայնքապետերին, դպրոցների տնօրեններին, առողջապահական հաստատությունների տնօրեններին՝ արագ արձագանքել և հնարավոր լուծում տալ սոցիալական, առողջական և կրթական խնդիրների կարգավորմանը՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին կրթության մեջ ընդգրկելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝

Ս.Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գ.Դանիելյան